

* * * *

Աչերս է չարտախ նըման, մեջն երկու ախպար կու կենան. կու կենան.
Մեծիս մեծ արեւ կ'ըսեն, պգտիկիս արեւ լուսընկայ:

* * * *

Լուսընկայ, քեզ չեմ սիրեր, խոռեր ես ու խոռ կու նայիս.
Ես արեգակ կու սիրեմ, կու ցաթէ ալեմս արունատ:

* * * *

Խաչին լուսընկան նորուն, ալվի մուխ տըւին աչերուս.
Առին ճերմակ պալերուս, չիթողին աղուոր ձագերուս:
Խօսիմ, կ'ելլեմ արեւուս. չիխօսիմ, կ'ելլեմ ձագերուս.
Ալվի կ'ելլեմ արեւուս, չեմ անցնիր աղուոր ձագերուս:

ՃԱՂԿԱՆՏԵՆ ԿՈՒՐԱՑԱԾ ՄԱՆՈՒԿԻ ՄԸ ՎՐԱՅ

Ես աս գիշեր դուրս ելայ, ճնճըղնին կու ճըվըլտային.
Կայնեցայ մըտիկ արի, իրարու գանգատ կ'անէին.
Մէկն ալ մէկալին կ'ըսեր՝ «Ի՛նչ դիժար է մական հոգին.
Թող ելլէ մանկան հոգին, թող չելլէ աչերն երեսէն.
Ես քաշած ու տեսած եմ, չիտեսնէ՛ տիւշմանիս աչուին:

ԱՆՏՈՒՆԻՆԵՐ

* * * *

Ես այս գիշեր դուրս ելայ մութ գիշեր, չիկար լուսընկայ.
Իմ եարն ալ վերէն ի վար, ձեռքն ունէր ոսկուն մաշալայ:
Թեւեւ բռնեց տուն տարաւ, դուռը դրաւ՝ ախիկն ի վըրան.
Սփռեց էպիւշիւմ խալի որ վործած տեսերկու տարի.
Ձըգեց սերասեր սետիր, իշլեմէ բարձերն եր վըրան.
Ձըգեց խուշ թիւյիւ տեօշէկ, մարգըրտէ եռողան ի վըրան:
Սագեց խուշ թիւյիւ տեօշէկ, մարգըրտէ եռողան ի վըրան:
Սագեց ի ոսկուն սեղան, հաւ խորւած՝ կաքաւն ի վըրան.
Բերաւ նըռան հատ գինի, որ գոյնը գիր գոյն կը նմանի.
– Ինձի որ խողող պինսար, ես պապիս մառանէն կ'ուտ'ի.
Ինձի որ եար չիպինսար, ես ալ հոս ի՛նչ բան ունէի: